

---

## ԱՆՀԱՓԱՐԱՍ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ ՊԱՏԺԻ ԿՐՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՇՈՒՐՋ

### ԼԻԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆ

19-րդ դարի սկզբում մի շարք եվրոպական երկրներում, այդ թվում նաև Գերմանիայում, իրականացվեց չափահասների և անչափահասների քրեակատարողական հիմնարկների առանձնացում<sup>1</sup>: Մինչ այդ անչափահասները ազատազրկում պատժատեսակը կրում էին չափահասների հետ միասին:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրական դատարանը 2006 թ. մայիսի 31-ի իր որոշմամբ հանձնարարեց օրենսդրին մինչև 2007 թ. տարեվերջ ընդունել դաշնային օրենք անչափահասների քրեակատարողական վարույթի մասին: ԳԴՀ սահմանադրական դատարանը իր որոշման մեջ հստակ նշում էր այն հիմքերը, որոնց համաձայն անչափահասների քրեակատարողական վարույթը չի կարող կարգավորվել մեծահասակների քրեակատարողական վարույթը կարգավորող նույն օրենսգրքով<sup>2</sup>:

Առաջին հերթին նշվում էր, որ թեև անչափահասների հատուկ քրեակատարողական վարույթին վերաբերող առանձին նորմեր օրենսդրության մեջ կան, սակայն դրանք սահմանափակ քանակությամբ են և չեն կարող լիարժեք կարգավորել այս ոլորտը: Մինչդեռ անչափահասների նկատմամբ կիրառվող քրեական պատասխանատվության միջոցների հետևանքները բոլորովին այլ են, քան թողնում է պատիժը չափահաս դատապարտյալների վրա: Անչափահասները գտնվում են կենսաբանական, սոցիալական և ֆիզիկական մի այնպիսի վիճակում, որի ժամանակ վերջիններիս մեծ մասի մեջ գերակշռում են անվստահության, լարվածության զգացումները<sup>3</sup>: Բացի այդ, անչափահասների դաստիարակման և զարգացման համար պատասխանատու են ոչ միայն իրենք, այլև՝ առաջին հերթին նրանց ծնողները, պետության հոգածության ներքո գտնվելու դեպքում՝ համապատասխան իրավասու անձինք, իսկ քրեորեն պատժելի արարք կատարելիս՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը:

Ուստի չպետք է մոռանալ, որ անչափահասների հիմնական իրավունքները սերտորեն կապված են նրանց դաստիարակողների հիմնական իրավունքների հետ, ինչից հետևում է անչափահասների քրեակատարո-

---

<sup>1</sup> Տե՛ս **Prof. Dr. Herbert Ostendorf**, Jugendstrafvollzugsrecht, Baden Baden, 2009, էջ 45:

<sup>2</sup> Տե՛ս [www.dvjj.de/veranstaltungen.php.php?artikel=842](http://www.dvjj.de/veranstaltungen.php.php?artikel=842)

<sup>3</sup> Տե՛ս **Падун О. А.** Психологические особенности личности несовершеннолетних, осужденных за совершение корыстно-насильственных преступлений. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук. Ростов-на-Дону, 2005, էջ 25:

ղական օրենսգրքում ուղղիչ հիմնարկի աշխատակիցների վարքագծի հատուկ և հստակ կարգավորման անհրաժեշտությունը:

Անչափահասների քրեակատարողական օրենսգրքի անհրաժեշտությունը հիմնավորվում էր նաև նրանով, որ անչափահասի իրավունքները, պարտականությունները, օրինակ՝ արտաքին միջավայրի հետ կապ հաստատելու կամ անչափահասի կողմից կանոնակարգի խախտման դեպքում պատասխանատվության ձևերը, պետք է սահմանվեն օրենքով, առանձին հոդվածների տեսքով, հստակ և մանրակրկիտ կանոնակարգվեն՝ ցանկացած կամայականությունից զերծ մնալու, ինչպես նաև անչափահասներին ուղղելու նպատակը առավելագույնս ապահովելու համար:

Անչափահասների քրեակատարողական վարույթի կանոնակարգման նպատակով առանձնացված օրենքի անհրաժեշտությունը հիմնավորելիս ԳԴՀ սահմանադրական դատարանը նշեց, որ օրենսդիր մարմինը պետք է ջանք չխնայի իր օրենսդրական գործունեությամբ ապահովելու անչափահասների քրեակատարողական հիմնարկներում հատուկ պատրաստվածություն ունեցող անձնակազմ, առանձնացված շենքային պայմանների առկայություն, ֆինանսական միջոցների շարունակական տրամադրում, որոնք պետք է ծառայեն ոչ միայն անչափահասների ուղղմանը, այլև նախապատրաստեն նրանց հասարակությունում կարճ ժամկետում վերաինտեգրվելուն: Իսկ այս խնդրի առավել արդյունավետ լուծումը, իհարկե, հնարավոր է անչափահասների քրեակատարողական վարույթը կանոնակարգող առանձնացված օրենքի առկայության պայմաններում: ԳԴՀ սահմանադրական դատարանը կարևորեց նաև քրեակատարողական հիմնարկներում անչափահաս դատապարտյալների ուսման ու կրթության անհրաժեշտությունը և դրանց ապահովման հատուկ պայմանների ստեղծումը. այս խնդրի լուծումը ևս պետք է իրականացվեր անչափահասների քրեակատարողական վարույթի մասին օրենքով:

Ռեսոցիալիզացիայի արդյունավետ իրականացման կարևորագույն մաս է դատապարտյալին պատժից ազատելուց առաջ նրա հետ տարվող միջոցառումների շարքը: Այդ ընթացքում անչափահաս դատապարտյալի հետ տարվող աշխատանքներն իրենց բնույթով, ձևով, տեսակով և բովանդակությամբ պետք է էականորեն տարբերվեն չափահաս դատապարտյալների հետ տարվող աշխատանքներից՝ հաշվի առնելով անչափահասների հոգեբանական առանձնահատկությունները, բնավորության անկայունությունը և այլն: Օրինակ՝ արդեն ընտանիք կազմած, սեփական վաստակի և աշխատանքի փորձ ունեցող չափահաս անձանց հետ քրեակատարողական հիմնարկից ազատվելուց առաջ տարվող աշխատանքը պետք է տարբերել հասարակությունում իր դերը դեռ չպատկերացնող անչափահաս դատապարտյալի հետ տարվող աշխատանքից:

Այս հիմքերը վերլուծելով՝ կարող ենք եզրակացնել, որ անչափահասների քրեակատարողական վարույթի մասին առանձին օրենքի ընդունումը ԳԴՀ-ում լուրջ քայլ էր անչափահասների քրեակատարողական վարույթը միջազգային չափորոշիչներին և մասնավորապես միջազգային մի շարք կոնվենցիաներով մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության նվազագույն պահանջներին համապատասխանեցնելու առումով (կրթու-

թյան իրավունք, հաղորդակցության իրավունք, պատժից հետո հասարակության մեջ ինտեգրվելու իրավունք և այլն)<sup>4</sup>: Քրեակատարողական հիմնարկներում անհրաժեշտ է ապահովել դպրոցական ուսումը դեռևս չավարտած անչափահասների միջնակարգ կրթություն ստանալու կամ արդեն դպրոցն ավարտածներին բուհ ընդունվելու հնարավորությունը (օրինակ՝ հեռահար կամ հեռակա ուսուցում կազմակերպելու միջոցով): Թեև նման փորձ արդեն իսկ առկա է ՀՀ-ում, սակայն անհրաժեշտ է դա օրենսդրորեն հստակ կանոնակարգել, սահմանելով կրթության իրավունքի ապահովման ընթացակարգը, որպեսզի անչափահաս դատապարտյալների միջնակարգ-մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը գործի ոչ թե որպես եզակի բացառություն, այլ դառնա բոլորի համար հասանելի հնարավորություն:

Հարկ է նշել, որ ԳԴՀ սահմանադրական դատարանի՝ անչափահասների քրեակատարողական վարույթը կանոնակարգող ինքնուրույն օրենքի ընդունման վերաբերյալ որոշման կայացումից հետո ԳԴՀ բոլոր տասնվեց երկրամասերում 2007-2008 թթ. ընդունվեցին անչափահասների քրեակատարողական վարույթը կանոնակարգող առանձին օրենքներ:

Անդրադառնալով ՀՀ օրենսդրության մեջ անչափահաս դատապարտյալների պատժի կրման ու կատարման իրավական կարգավորմանը:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքը կարգավորում է ինչպես չափահասների, այնպես էլ անչափահասների պատժի կատարման և կրման խնդիրները: Անչափահասները՝ որպես ոչ կայուն, դեռ չձևավորված խումբ, ունեն հոգեբանական, սոցիալական, ֆիզիոլոգիական առանձնահատկություններ, որոնք հաճախ կապված են լինում վտանգի, լարվածության, հասկացված չլինելու զգացողությունների, ինքնահաստատման պահանջմունքի հետ<sup>5</sup>: Ազատազրկում պատժի կրման հետ կապված պատժատեսակների իրականացումը անչափահաս դատապարտյալների նկատմամբ որոշիչ ազդեցություն է ունենում նրանց ողջ կյանքի ընթացքում: Յուրաքանչյուր քրեակատարողական օրենսգիրք կոչված է արդյունավետ իրականացնելու պատժի նպատակները, սոցիալական արդարության վերականգնումը, դատապարտյալի ուղղումն ու նոր հանցագործությունների կանխումը, ինչպես նաև ազատազրկում պատժի կրման հետ կապված պատիժների դատապարտման դեպքում՝ նաև հանցանք կատարած անձի ռեսոցիալիզացիան: Այս նպատակներին հասնելու մեթոդներն ու ճանապարհները չափահասների և անչափահասների պարագայում իրարից խիստ տարբերվում են:

Առանձնակի կարևորություն տալով անչափահաս դատապարտյալների կարգավիճակին, նրանց նկատմամբ պատժի իրականացման եղանակների առանձնահատկություններին, հետագայում նրանց կողմից քրեորեն պատժելի նոր արարք կատարելու կանխարգելիչ գործողություններին՝ կարևորում ենք ՀՀ քրեակատարողական օրենսգրքում անչափահասների նկատմամբ պատժի կատարմանը վերաբերող առանձին գլխի անհրաժեշտությունը մի քանի պատճառաբանմամբ:

<sup>4</sup> Տե՛ս **Prof. Dr. Herbert Ostendorf**, Jugendstrafvollzugsrecht, Baden Baden, 2009, էջ 50:

<sup>5</sup> Տե՛ս <http://www.bundesverfassungsgericht.de/pressemitteilungen/bvg06-043.html>

Ա. ՀՀ քրեակատարողական օրենսգրքը տալիս է դատապարտյալների իրավական կարգավիճակի բնորոշումը, որը վերաբերում է ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս դատապարտյալներին: Մինչդեռ անչափահաս և չափահաս դատապարտյալների իրավունքներն ու պարտականությունները չի կարելի նույնացնել մեկ հոդվածով նախատեսված չափորոշիչներով: Մեր կարծիքով, ՀՀ քրեակատարողական օրենսգրքում ինքնուրույն նորմերով պետք է նախատեսվեն անչափահաս դատապարտյալների իրավական կարգավիճակի բնորոշումը և սահմանումը, ինչը բացակայում է ներկայիս քրեակատարողական օրենսգրքից: Ավելին, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 14-րդ հոդվածը նախատեսում է դատապարտյալների իրավունքների և պարտականությունների տարբերակում՝ հիմք ընդունելով միայն պատժի կամ ուղղիչ հիմնարկի տեսակը և դրանում սահմանված ներքին կանոնակարգը՝ չնշելով իրավունքների և պարտականությունների տարբերակման այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է դատապարտված անձի տարիքը:

Բ. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16 հոդվածի համաձայն՝ դատապարտյալի ուղղումը (ենթադրվում է ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս դատապարտյալների) մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մեջ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով:

Առաջին հայացքից ստեղծվում է տպավորություն, որ օրենսդրի կողմից դատապարտյալի ուղղման հասկացության նման ձևակերպումը սպառնիչ կերպով կարգավորում է թե՛ չափահաս, թե՛ անչափահաս դատապարտյալների ուղղման բովանդակությունը: Սակայն, նախ, անչափահաս դատապարտյալը, ով դեռ լիարժեք կրթություն չի ստացել, չունի մեծ կենսափորձ, չի կարող գիտակցել մարդ-հասարակություն հարաբերակցության կամ համակեցության կանոնների բովանդակությունը: Կամ՝ ի՞նչ պետք է հասկանալ «կենսակերպի ամրապնդում կամ զարգացում» ասելով: Եթե այս դրույթը քիչ թե շատ ընդունելի է չափահաս դատապարտյալների համար, ապա անչափահաս դատապարտյալների համար այն պետք է ձևակերպվի առնվազն հետևյալ կերպ. «Առողջ կենսակերպի ձևավորում»:

Կարծում ենք՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում դատապարտյալի ուղղմանը նվիրված ձևակերպումը պետք է վերանայվի՝ անչափահաս դատապարտյալների ուղղման բնորոշումը հստակեցնելու և վերջիններիս հանդեպ ներգործության արդյունավետ միջոցների ավելի մեծ շրջանակի կիրառումն ապահովելու նպատակով:

Գ. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17 հոդվածի 1-ին կետը, թվարկելով դատապարտյալի ուղղման հիմնական միջոցները, վերջում ավելացնում է, որ ուղղման միջոցների առանձին տեսակներ անչափահասների համար կրում են պարտադիր բնույթ՝ չմասնավորեցնելով անչափահաս դատապարտյալների ուղղման հիմնական միջոցների ցանկը: Նման մոտեցումն ընդունելի համարվել չի կարող՝ նկատի ունենալով անչափա-

հաս դատապարտյալների սոցիալ-հոգեբանական զգայուն, դեռ չձևավորված, անլիարժեքության զգացումով համակված խմբի առանձնահատկությունները: Նրանց նկատմամբ իրականացվող ուղղման հիմնական միջոցները չեն կարող նույնացվել չափահասների ուղղման հիմնական միջոցների հետ, ավելին անչափահաս դատապարտյալների նկատմամբ կիրառվող ուղղման միջոցների ցանկը պետք է սահմանվի ավելի մանրամասն:

Ի տարբերություն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ ԳԳՀ անչափահասների քրեակատարողական օրենսգիրքը նախատեսում է «կատարողական ծրագիր», որն, օրինակ, Հեսսեն երկրամասի անչափահասների քրեակատարողական վարույթը կանոնակարգող հատուկ օրենքում անվանվում է «Աշխատանքային պլան»: Կատարողական ծրագրում ներառվում են անչափահասի ուղղման ապահովման համար անհրաժեշտ տեղեկությունները՝ նրա կողմից կատարված հանցագործության պատճառներն ու հանգամանքները, անչափահասի դաստիարակման նպատակը, բովանդակությունը և մեթոդները, անչափահասի կողմից սպորտով կամ ազատ ժամանցի այլ տարատեսակով զբաղվելը և այլն<sup>6</sup>:

Նման կատարողական ծրագրերի առկայությունն ավելի արդյունավետ է դարձնում անչափահաս դատապարտյալների ուղղման գործընթացը: Չէ՞ որ ծրագիրը թույլ է տալիս քրեակատարողական հիմնարկի աշխատակազմին միշտ աչքի առաջ ունենալ տվյալ անչափահաս դատապարտյալի կատարած հանցագործության առանձնահատկությունները, ինչպես նաև այդ առանձնահատկությունների հիման վրա հոգեբանների, սոցիոլոգների կազմած դաստիարակման և ուղղման մեթոդները և նպատակը:

Ամփոփելով, առաջարկում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում նախատեսել առանձին գլուխ՝ նվիրված անչափահաս դատապարտյալների նկատմամբ ազատազրկում պատժի կրմանը և կատարմանը, ինչը կավելացնի ինչպես պետության, այնպես էլ հասարակության ուշադրությունն անչափահաս դատապարտյալների նկատմամբ, ինչպես նաև անչափահասների քրեակատարողական հիմնարկի վարչակազմին կօգնի ավելի արդյունավետ իրականացնելու անչափահաս դատապարտյալների ուղղումը:

**ЛИАНА МАРУКЯН – К вопросу несения и исполнения несовершеннолетними наказания в виде лишения свободы.** – Несмотря на многочисленные реформы по улучшению в Армении условий отбывтия наказания, чувствуется нехватка государственного внимания к несовершеннолетним заключённым. Сегодня во многих развитых странах инициирован или уже разработан уголовно-исполнительный кодекс для несовершеннолетних.

С учётом физиологических и психологических особенностей, свойственных несовершеннолетним, в статье предлагается внести в действующий уголовно-исполнительный кодекс РА главу об исполнении наказания в виде лишения свободы для несовершеннолетних. Это урегулирует соответствующий уголовно-исполнительный процесс.

<sup>6</sup> Տե՛ս **Prof. Dr. Herbert, Ostendorf** Jugendstrafvollzugsrecht, Baden Baden, 2009, էջ 134:

**LIANA MARUKYAN – *Some Issues on Serving and Execution of Imprisonment in Regard to Juvenile Offenders.*** – In spite of numerous reforms implemented in Armenia to improve conditions of serving prison term by convicts, there is a shortage of sensitive and careful Penitentiary state policy in regard to juvenile offenders. Nowadays, many developed countries have already adopted a juvenile penitentiary code or have started such an initiative.

The dynamic development of social relations makes it necessary to adopt a separate juvenile penitentiary code. Taking into account peculiarities of serving imprisonment by juveniles, as well as their specific physiological and psychological characteristics, the author suggests foreseeing a special chapter on execution of imprisonment towards juvenile offenders in the Penitentiary Code of the Republic. The latter will regulate the penitentiary proceeding of serving and execution of imprisonment in regard to juvenile offenders.